


ՊԱՅՄԱՆՔ

Տարեկան գին Կ. Պոլսոյ համար 10 Լ. 50 շ.
Գաւառացի 2 Լ. 50 շ.
Վեցամս. Կ. Պոլսոյ 5 Լ. 50 շ.
Գաւառացի 1 Լ. 50 շ.
Օտար երկիրներու 50 շ.
Շանուգման տողը մէկ անգամի հա-
մար 3 զուրուշ, երկու անգամի հա-
մար 2 զուշ է. աւելի անգամներու
համար զատ սակարկութիւն կը-
լայ :
Իւրաքանչիւր թիւ 40 փարա արծ :



ՀԱՅԿԱՍՏԱՆԻ ԴԱՏԱՎՈՐՈՒԹՅԱՆ ԴԱՐԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԴԱՏԱՎՈՐՈՒԹՅԱՆ ԴԱՐԱՆ

ՔԱՂԱՔԱԿԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ ԵՒ ՏՆՏԵՍԱԿԱՆ

ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՈԼԻՍ 45 ՄԱՅԻՍ

ՔԱՂԱՔԱԿԱՆ

Անգղիոյ խորհրդարանին մէջ Ա. րեւելեան խնդրոյն վրայ տեղի ունե-
ցած վիճաբանութիւններն անցեալ
շաբթու անգամ Երեւոյ, զԺողովու-
րդ «անօրու» անուանելով դանդա-
քանդի գործնական եղանակացութիւն
մը չեն ընծայեր, այլ բանակաւի աս-
պարէզ մը, ուր ատենախօսք իրարու
հետ կը մրցին հանրապետական յաղ-
թանակ տանելու համար : Օտար եր-
կիրներու մէջ, այն սակաւածիւն ան-
ձինք՝ որք աչքէ կանցնեն այս վի-
ճաբանութիւնները, դուցէ՛ք բարոյա-
պէս կօդանայ, աշխարհ կը յառաջա-
դիմէ գողտիկարօք և Անգղիոյ ա-
զատ վիճաբանութեան օրինակ կու-
տայ, սակայն առ այժմ՝ Սրբեկը և
աշխարհ ուր որ է հոն կը մնայ, և
Ասիոյ խորհրդուն մէջ աւագակներն ու
հարստահարողները, քաղաքակրթու-
թեան այսպիսի նաւը արտայայտու-
թիւններէն անդէտ, կը շարունակեն
իրենց չարագործութիւններն, որոց
ցաւալի նկարագիրը կը տեսնուէր մեր
հաստատակած Տիգրանակերտի և
ուրիշ անդերու նամակաց մէջ : Աւա-
ղակութեամբ հարստացողը մը բոլո-
րովին անծանօթ է նոյն իսկ Լորտ Պի-
քոնֆիլիսի մը կամ Լորտ Սալիսպրիի
մը գոյութիւնն : այնպիսին միայն իւր
կարեւորութիւնը կը ճանչէ :

Ինչ որ է, հետաքրքրութեան հա-
մար հարկ կը համարուի Անգղիոյ
խորհրդարանին մէջ եղած վիճաբա-
նութեանց վրայ քանի մը տեղեկու-
թիւն տալ :

Արեւելի գուքն երկու ժամու
չափ տեւած ատենախօսութեամբ մը
նախարարաց աշխարհալարութիւնը
քննադատեց. Պէրլինի դաշնագրու-
թիւնը, զոր Լորտ Պիքոնֆիլիս իւր
իւր գլուխ գործոցն համարելով պար-
ձանօք կը յիշէր միշտ, իրեն Այսթէ-
ֆանոսի դաշնագրութեան պատճէնը
ցոյց տուաւ, փոքր տարբերութեամբ
իսկ Անգլո-Օսմանեան պայմանադ-
րութիւնն, ըսաւ, այս օգուտն ունի
միայն, որ առանց բարենորոգման Օս-
մանեան երկիրն պաշտպանութեան
համար երաշխաւորութիւն չընծայեր.
նախարարութիւնն ՚ի բաց թողուց
Անգղիոյ հայրենասիրաց այն սկզբ-
բունքը թէ պէտք է զթուրքիա պաշտ-
պանել, բարեկարգեալ լինի կամ ոչ :
Ի՞նչ գեղեցիկ և հայրենասիրական
սկզբունք : Եթէ նախարարութիւնը
կը պարծի որ կիսրոսը վասակեցաւ,
այս կը նմանի տարին 200,000 կամ
300,000 ոսկի եկամուտ ունեցող Լոր-
տի մը գործակալատարն ընթացից, որ
իւր տիրոջն իմաց կուտայ թէ պա-

ռաւի մը դգմենի տարտեղը գներ
է : Իսկ թուրքիոյ դալով՝ ըսաւ թէ ոչ
միայն դաւառներ՝ այլ և անկախու-
թիւն կորուսած է :

Լորտ Պիքոնֆիլիս երկարօրէն
պատասխանեց այս դիտողութեանց :
Փոքր Ասիոյ բարենորոգման դադա-
վարին վրայ արհամարհանօք կը նա-
յի, ըսաւ, իւր ընդգիծակօսքը, բայց
ամեն մեծ դադալարաց վրայ ՚ի ըս-
կըղբան արհամարհանօք նայուած է :
Արդարեւ փոքր Ասիոյ վերանորոգու-
մը Պոլսոյ վրայ գրաւման նման իննամն
եայ գործ մը չկրնար լինիլ, բայց
Միտհատի փաշայի նման պետական
մարդու մը պայմանաւաճի մը համար
Սրբիոյ կառավարիչ անուանիլը դո-
հունակութեան արժանի համարեցաւ,
և սինդիկատէ մեծ աղբեղութիւն պի-
տի ունենայ : Արդարեւ Միտհատի փա-
շային արժէքն անժխտելի է, և մեծ
յաջողութեամբ կատարած էր Դանուբ
եան գաւառի և Պաղատի ընդհա-
նուր կառավարչութեան պաշտօննե-
րն : այսու ամենայնիւ, եթէ Միտ-
հատ փաշային յիշեալ գաւառաց մէջ
պաշտօնավարութիւնը Լորտ Պիքոն-
ֆիլիսի երեւակայած «Փոքր Ասիոյ բա-
րենորոգման մեծ գործին» հետ բաղ-
դատեմք, անհնար է եղբակացնել թէ
Լորտ Պիքոնֆիլիս զաշխարհ ծաղը-
նել կուզէ :

Լորտ Պիքոնֆիլիս Այսթէֆանոսի
և Պէրլինի դաշնագրութիւններն ալ
բաղդատելով հաստատու ուղեց թէ
այս վերջինը մեծ բարիք ըլլած էր
թուրքիոյ, զայն կանգուն պահելով,
իւր հպատակաց վիճակին բարեօր-
ման պայմանաւ :

Լորտ Պիքոնֆիլիսէն յետոյ Լորտ
Սալիսպրի ալ երկարօրէն խօսելով
եղբակացուց թէ ըստ որում փոքր իշ-
խանութիւնը անկարող են մեծ աշ-
խարհին մը դիմագրել, Անգղիա
Օսմանեան Դրան օգնեց, ոչ թէ ա-
նոր վրայ մասնաւոր սէր մ'ունենա-
լուն համար, այլ վասն զի Սլավոն
սկզբունքին աղբեղութեան դէմ պառ-
ւար մը կանգնել պէտք էր : Պէրլինի
դաշնագրին զթուրքիա աւելի զօրա-
ւոր դիւրի մը մէջ դրած էր. եթէ
տակաւին թուրքիա կենսական տարրը
ներ ունի, եթէ կրնայ տաքնապալից
վիճակի մը մէջ իւր գործերը կառա-
վարել, դաշնագրութիւնն երկար
կեանք ապահոված է իրեն : Պէրլին-
նի դաշնագրին այս ամեն արդիւնքը
ձեռք բերուած էին առանց կաթիլ
մ'Անգղիական արիւն թափուելու :

Ահա այս է Անգղիոյ խորհրդարա-
նին վիճաբանութեանց համառօտ
պատկերն, յորմէ կրնայ մակարեւ-
ելի թէ տեսնալօք իրենց տեսակէ-
տով կրնան դո՛ւ լինիլ թէ՛ ճարտար
ճառեր խօսեցան, ունկնդիրներն ըզ-
մայլեցուցին, և պահ մ'աշխարհի
ուշադրութիւնն հրաւիրեցին իրենց

վրայ : բայց թէ և Լորտ Պիքոնֆիլիս
Պոլսոյ վրայ իննամնեայ գրաւման վը-
րայ այնպիսի կերպիւ խօսեցաւ իւր
թէ ոչինչ բան մ'եղած լինէր, այսու
ամենայնիւ այն գրաւման աւելի մեծ
աղբեղութիւն ունեցաւ գործնակա-
նապէս թուրքիոյ վրայ՝ քան թէ իւր
բոլոր ճարտարխօսութեան հեղեղ-
ներն : Արեւելի գուքն ըսաւ թէ
Պոլսոյ վրայ աղբեղին ժողովին մէջ
Անգղիոյ անունը չտրուեցաւ, մինչ-
դեռ Ռուսիա իւր ազատարար աղջու-
նեցաւ միշտ : Անտարակոյ Պոլսոյ
րիա՝ եթէ ոչ բոլորովին Ռուսական
գո՛նէ Սլավոն գաւառ և իշխանութիւն
մ'եղաւ : Ռուսիա՝ երեւթը միայն
պահեց, բայց իւրօք Պոլսոյ վրայ
տիրեց. և եթէ Եւրոպա աղբեղու-
թիւն մ'ունեցաւ, այն ալ այս է որ
Պոլսոյ վրայ իրաւունակ զխօսին Ռու-
սական ինքնօրէն եղաւ : Դատերն
այս տարբերութիւնը մեծ բան չեն
համարի և կը գուշակեն թէ Պոլս-
ոյ վրայ աղբեղայ պատմութիւնը Սրբ-
իոյ և Դարաստալի պատմութեան յար-
և նման պիտի լինի :

ՀԱՅ Ք

Բ.

(Երեւան-Երեւան Դ. Բ. 2324)

Այսպիսի դժուարին կենաց ըն-
թացքին մէջ բնութիւնը Հայուն մեծ
առաւելութիւն մը չնորհած է, պիկը
ուսկրներով մարմին մը, լայն բուռն
յօդուածներ և երկաթի ջղեր. Հա-
յուն հետ մէկ անգամ գործը ունե-
ցողը զինքն անմիջապէս կրնայ գտնա-
ղանել որոշել. այնպիսի առանձին
յատկութիւն մի ունի : Սեռ մաղի
խուրձ մը, յօնքն ու մօրուքը, թուխ
և կէս քոյրակեալ աշուրները, լայն
ճակատը, մտադրութիւնը զրոգող
բերանը զրեթէ կենդանական երա-
խով, ցրած և հօր այլ անշուք ամ-
բող կազմած քովը : Արտաքուստ՝ Հա-
յը բեռնարարէ կենդանայ պէս դի-
մանալու համար ստեղծուած կ'երևի :

Թէ Հայը ժրաջան, չափաւոր,
կարգաւոր և խնայող է, միով բա-
նիւ թէ լաւ և մտացի կենցաղավա-
րութեամբ կ'ապրի, ոչ ոք կրնայ
ժխտել, իւր տնային կեանքն է իսկու-
նահապետական : Հայերն իրենց հայ-
րն ու մայրը կը պատուեն, կանայքը
լաւ կը հողան, հայրն իւր կնոջ ու
սորոց համար կ'իսաստուած մի է :
Հայն իւր ընտանեացը մէջ իւր համեղ
ժամերը կ'անցընէ :

Իւր կրնն ու գուստրներն ամե-
նաթանկագին հագուստներով կը
զարդարէ և կը ջանայ հայրաբար սր-
տան անգամները լաւ ուտել և տաք
հագնիլ : Ասոր համար կը պահանջէ
որ առեւը միայն ինքը վարէ, և չի

կրնար միտքը պառկեցնել որ կա-
նանցի նման վախուածութիւնը ըզ-
մը օգի բանայ :

Ընտանեայ անդամներէն մէկուն,
հայրենակցին, ծննդեան տեղւոյն,
խորհրդով և բաց ձեռք օգնելը
Հայուն համար իւր ՚ի խղճէ պարտա-
ւորեալ պարտք կ'երևայ : Այս ամեն-
քը սերտ կապով կը կապէ կրօնական
հաւատար մատակարարութիւնը՝ հաս-
տատեալ սրբազան դրոյշներով ու սո-
վորութեամբ, և անով ոչ ակնթարթ
մը կը հրաժարի այն համոզմանէն
թէ Հայը առանձին եկեղեցի մը կը
կազմեն : Ժողովուրդ ու եկեղեցի են
իւր մէկ լախումն երակաց և մէկ
մտածութիւն : Անոր համար աղագ-
յին դրացունքն այնպէս խոր, այն-
պէս կակուղ և այնպէս դրայուն է :
Քաղաքակրթութեան լաւ տեղեկ են
աղագային պատմութեան. մտադրու-
թիւնն ինքն իրենց պայծառու-
թեան կէտերուն վրայ է, և Հոսով
մայեցաց, Ասորաց, Պարսկաց և Ա-
րաբացոյ վրայ այնպէս կը խօսին՝
իւր թէ իրենց ժողովուրդն անոնց
հետ ոչ թէ հաղար՝ այլ հարիւր տա-
րի յառաջ պատերազմած ըլլայ : Եւ
ասով ո՛ր օտար երկիրն ալ որ դադ-
թեն, ո՛ր բարձր պաշտօնի ալ որ հաս-
նին, իրենց կրակարաններուն վրայ
աղագային հուրը միշտ վառ կը պա-
հեն. եթէ Յոյնք իրենց ուսումնա-
տեղիներուն, հիւանդանոցներուն և
ընկերութեանց շատ բարիք կ'ընեն,
Հայը իրենց հաստատութեանց հա-
մար շատ աւելի կ'ընեն, բայց անոր
վրայ շատ խօսակցութիւն չեն ընէր :

Հայոց ուսումնասիրութիւնը միշտ
յառաջանալու վրայ է, ինչպէս նաեւ
գիտութեան յարգութիւնը, միտա-
ւորական զբաղմանց ուրախութիւնը :
Ո՛ր որ տափ մի Հայ կը հաստատուի,
հոն անմիջապէս եկեղեցւոյն քովն ու-
նի նաեւ դպրոց մը և լրագիր ալ բե-
րել կը տրուի : Չկայ ուրիշ աղբ մը,
որ օտար տեղ պոչալի աղագայնութեան
մտաւորական կեդրոն դրած ըլլայ :
Բայց իրենց ուսումնասիրութեան մը-
ղումն աւելի շատ և մանր, քան մեծ
և ընդարձակ բաներու ետեւէ է : Յա-
նձն մասնաւոր հնարագիտութեան
ողի չեն ցուցնիր, շատ աւելի սիրով
կը յարին այն գիտութեանց և զըը-
եանց, զորոնք նախորդը թողուցած
են :

Սակայն Հայն ոչ միայն գիտու-
թեանց սահմաններուն մէջ, այլ նաեւ
ամեն առարկայներուն մէջ հաւասար
հնարագիտութիւն և գործնական
հանճար կը ցուցնէ : Երկրագործու-
թիւն ու առուտուր սիրական զբաղ-
մունք են : Իրեն մշակ կը բանեցնէ
* Կերի թէ Հայոց ընտանեկան
կենացը վրայ ըրած այս նկարագիրն ա-
միայնական ժամանակէն քաղած է հե-
ղինակը : Ծ. Խ.

իւր զօրութիւնն , որ զանաւորներ դոր-
ծիքն ու հողը կը յաղթահարէ : Իր-
ըն վաճառական կամ առուտորի միջ-
նորդ մեծ ուսումնասիր չընէր , հաս-
գարտութեամբ ու խնամով կընարէ
նպատակ նպատակէ ետեւ , և անդա-
դար անվերջով ետեւէն կերթայ : Բո-
լոր Արեւելք կը վախճայ Հայոց առեւ-
տուրի ոգիէն , կամ շատ աւելի այն
ողջոյն անընդհանգրեցիկութենէն ու
դիւրամիտութենէն , որուն հետ
կընկերանայ զարմանալի աղօղակու-
թիւն մը , որով իւր սրամտութիւնը
կը ծածկէ : Ըսել կուզեմ , որպէս թէ
Հայր կարենար փայտէն ու երկաթէն
թափանցել տեսնել թէ գործակից
բարեկամին արկեղ մէջ ո՞րչափ ոսկի
կայ , և թէ անոր յատակագծերը
քիթին ծայրէն կը կարգւայ , ուր կեր-
պարանքը մարմնաբայ հանդարտու-
թիւն , իսկ շրթունքն ու աչքերը ցը-
միշտ միօրինակ քմեխող կերպնեն :
Հայն ուղածը ճանաչող կը հասնէ կը
կատարէ կը լինի : Ոգւոյն հաւա-
սարագնայ ժամացուցի նման գոր-
ծիքները երբեք կանգ չեն առնու-
նոյն իսկ ծովեղբերոյ երկրներուն
խեղճ բեռնակիրը , իւր ծանր բեռն
տակն՝ որ սոսկ մարդու մը համար ա-
հագիւն կերակայ , իրաւ յառաջ դը-
նացած ժամանակը կը հաշուէ թէ ի-
րիկունքն ու զօրքն իրաւ մնալու է ,
ամայն վերջը ո՞րչափ կըլլայ , ինչպէս
ապահով պահելու է , և թէ արդեօք
տարւոյն վերջը վառտակը չի՞ կապեր
պղտիկ դրամագլուխ մը , որով ան-
ձին համար քիչքը գործք մը կարե-
նայ սկսիլ : Հայ քաղաքագէտ մը որ
իւր տաղանդը թուրուղ կամ Մարի-
տանիս կրցած է անփայլել , երբ իւր
տանեաց տակը կը տեսնուի , կարծես
թէ սրտին հաճոյքն ինքն անձամբ է ,
տակայն և այնպէս անդադար կը ճար-
տարամտէ թէ ինչ կերպով կարենայ
վաղուան օրն իւր այս կամ այն հա-
կառակորդը խորտակել կամ յինքն
շահել , որպէս զի իւր պաշտօնն ալ
աւելի պաշտարեք : Աղղային արուեստ
անուանելու է այն յարմարիւր , զոր
նաւը , կըլիւր , խնարհիւր , որով գի-
տէ Հայն անվտանգ մնալու ամենայն
անկիւն , եթէ արկած մը կամ այնպի-
սի դէպք մը հանդիպի որ ուրիշի մը
համար կեանքն իսկ ափէ , ինքն իւր
հաւատարակիւ քաջատրտութիւնն
տկնթարթ մի ալ ձեռքէ չիթողուր :
Ի մարմին և ի հոգի կը բնակի յա-
տուկ խիստ պնդութիւն , կարծրու-
թիւն , անսասնութիւն , որ ամեն
ցնցումէ անդրադուրի է :

Թերեւս ըլլան ասոնք ոչ այնչափ
հաճողական յատկութիւններ , բայց
ժողովրդեան մը յարատեւութեան և
յառաջդան համար յիրաւի ամե-
նակարեւոր , բայց մեծ հակառակ
կողմն ալ չպակիւր : Ո՞ր ժողովուրդը
չունի իւր տկար մասը , Հայք երկու
մեծ պահասութեանց բաժանակից
եղած են , մէկը Տաճկաց , մէկը
Փոքր Ռուսաց :

Հեղինակ Լուսով

ՀԵՌԱԳՐԱԿԱՆ ԼՈՒՐԵՐ

Փրիպէ 23 մայիս .
Արեւելեան Բուսմէյի առժամանակեայ
կառավարիչ Սթօլթիս զօրավարն իշխա-
նութիւնը Սուլթանին պատուիրակին
(այսինքն Ալէքս փաշային) չյանձնելու
համար բնիկ մասնախումբ մը կազմել
փորձեր էր՝ որուն պիտի յանձնէր առ-
ժամանակեայ կառավարութիւնը . բայց
Կ. Պոլսոյ Ռուսական դեսպան Լուսանօֆ
իշխանին հրամանին վրայ , Սթօլթիս
զօրավարը Փրիպէի պիտի մնայ մինչեւ
Ալէքս փաշային հասնիլը : Ալէքս փաշա-
յին գաղտնեան մէջ մի աւելոր յապտու-
մը ներկայ վիճակն աւելի կը ծանրացնէ :

Օպրուէճի զօրավարն այս առաւօտ
Պուրկալ գնաց :
Ալէքսանդրիս 24 մայիս .
Ալէքսանդրիս թէ Սթօլթիս ի մտոյ
Կ. Պոլսի երթալու միտք ունի :
Լոստրա 23 մայիս .
Թայմը լրացին իւր պարտաւորութե-
ւում կը հաստատէ այն զրոյցը թէ Գաղ-
ղիա և Սինդիս Արեւելից մէջ գիւտնա-
գիտական միտքան գործողութեան մ'ինչ
ինչ մանրամասնութեանց վրայ չեն կըր-
ցած համաձայնիլ , բայց կը յաջի թէ եր-
կու տեղութեանց միջև գիւտնագիտական
տնայադիւր անհամաձայնութիւն մը չկայ :
Գաւիթէ 23 մայիս .
Անգղիացի Կոստոն փաշան Սուտանի
կառավարչութիւնէն հրաժարական տուաւ :
Լոստրա 23 մայիս .
Բարեկուս չորսանդանէն Մատիւրա-
յի միջոցաւ եկած հեռագրական լուրեր
կը ծանուցանեն թէ կեդրոնական կառա-
վարութեան նոր հրահանգներուն վրայ հը-
րաման եղեր է Անգղիական զօրաց որ
յառաջ քաշեն Ջուրնեքուն երկրին մէջ :
Փարիզ 26 մայիս .
Դատական նախարարութեան խոր-
հրդական Պ. Կոպլէ և Պատարթեան
երեսփոխան Պ. Բօյ Տը Գասանեաքի վը-
կայներն որոշեցին թէ մենամարտի տե-
ղի չկար :
Լոստրա 26 մայիս .
Բարեկուս չորսանդանէն եկած լու-
րեր կը ծանուցանեն թէ Լորտ Չէլմիֆօրա
և իւր հրամանաց ներքեւ գտնուող զօրը
Ջուրնեքուն երկրին մէջ յառաջանալով
Գաւիթիս հասեր են :
Այս առաւօտ հասած հեղինակը
Փրիպէ 26 մայիս .
Սթօլթիս զօրավարին կողմէն պատ-
ւիրակ մը տեղական պատգամաւորու-
թեան մը հետ Հէրմակը (սահմանագը-
լուրը) գնաց Սլէքս փաշան որդեկու-
նեք օրէ ի վեր Փրիպէի մէջ պատ-
րաստութիւնը կը տեսնուի փառաւոր
ընդունելութիւն մ'ընելու նոր ընդհա-
նուր կառավարչին :
30 Երեսփոխարդ Պուրկալ սպայք Սո-
ֆիայի զինուորական դպրոցէն ելնելով
հոս հասան՝ Արեւելեան Բուսմէյի աղղա-
յին զինուորութեան մէջ մտնելու համար
Վիթմալի զօրավարին կազմութիւնը
խիստ կը դժուարանայ Ռուսաց սաստիկ
ընդդիմութեան առջև :
Լոստրա 26 մայիս .
Թայմը կըսէ թէ Անգղիա Հելլենա-
կան խնդրոյն նկատմամբ բնաւ ճնշում
չբանեցուց Գրաս վրայ , և կաւելցնէ թէ
հաւանական է որ մօտ ատենէն իրաւա-
խոհութիւն մը կ'ընտրէ :
Նոյն լրագիրը կը հաւաստէ թէ Գաղ-
ղիայ կառավարութիւնն Նեղիստոսի նը-
կատմամբ հսկողութեան կամ համարա-
ւութեան ծրագիր մը կը չեն , զոր եթէ
Նեղիստոսի փոխարքայն ընդունի , իւր լը-
խանութիւնը պիտի շարունակէ :
Լոստրա 26 մայիս .
Օրմ. Բօնա . 11 5/16
Փրիս . 1863 11 5/4
» 1869 14 5/8
» 1871 47
» 1872 21 1/2
» 1873 12 5/8
» Կղիպոս 60 3/4
Անգլ. Բօնա . 98 13/16
Փարիզ 26 մայիս .
Օրմ. Բօնա . 11,55
Գաղղ. Բօնա . 5 0/0 80,85
» » » 60 85,55
» » » 5 0/0 115,55

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

Ինչպէս արդէն ծանուցած էինք ,
Արեւելեան Բուսմէյի ընդհանուր կա-
ռավարիչ Ալէքս փաշան երէկ ժամ
7ին յատուկ կառավարմով մը մայրա-
քաղաքէն Փրիպէ գնաց :
Վաղը լրագիրն իւր այս առա-
ւօտեան թուով Փրիպէէն երէկ քաշ-
ւած Ռիւթերի հեռագիր մը կը հրա-
տարակէ ծանուցանող թէ Սթօլթիս
զօրավարը Չարէն հրաման ստացեր
է որ մինչև Ալէքս փաշային գալը փե-

լիպէ կենայ և իշխանութիւնն ան-
ձամբ անոր յանձնէ :
Յիշեալ թերթը կը ծանուցանէ
նաեւ թէ Բուսմէյի հրամանատարաց
նոր հրամաններ եկեր է , որպէս զի
Արեւելեան Բուսմէյի պարպուելը
փութացնեն :
Օպրուէճի զօրավարն առջի օրը
Կ. Պոլսի վերադարձաւ :
Պուրկալից առժամանակեայ կա-
ռավարութիւնն որոշեց որ դուրսէն
վառնա բերուող եղևրուն համար
10ական բուսլի մաքս վճարուի : Այս
տնօրինութեան վրայ վառնայի մէջ
մնին գինը խիստ բարձրացած է :
Ելմտական նախարարութիւնն 230
ոսկի տուեր էր Նամիզ փաշային իւր
ճամբու ծախք իշխանիս երթալու
և վերադառնալու : Նամիզ փաշան
այս գումարէն 120 ոսկի միայն ծախ-
սելով , մնացած 130 ոսկին ելմտական
նախարարութեան դարձուցեր է :
Տրապիզոնի և Կարնոյ միջև դըտ-
նուող ուղին վերին պատերազմին
ժամանակ շատ տեղերէն փոխուած
լինելով , կառավարութիւնն յիշեալ
կարևոր ուղին և անոր վրայ գտնուող
կամուրջները նորոգել որոշեց , և ա-
սոր համար պէտք եղած տեղեր հը-
րամաններ արուեցան և պաշտօնա-
տարներ զրկուեցան :
Կառավարութիւնը մայրաքաղա-
քիս ծովեղերաց քանի մը կողմերը
ծովափ (բըխթալ) շինել որոշեց , և
գործը նախարարի դրաւ : Զմիւռ-
նից ծովափունքը շինող Պ. Տիւսո
անցեալ չարթու , և Լոստրայի ստո-
բերկեայ երկաթուղին շինող ճարտա-
րապետ Պ. Ռիւրըն կերակի օրը մայ-
րաքաղաքս եկան այս գործին համար :
Կօլոս լրագիրը կը գրէ թէ Վեհ-
Սուլթանը Ռուսական աշխարհագա-
րութեան անկեղծութիւնը կը ծանչէ
և մեծ համարում ունի Կ. Պոլսոյ
Ռուսական դեսպան Լուսանօֆ իշխա-
նին վրայ : Մօտեք Սուլթանը թան-
կողին ժամացոյց մ'ընծայեր է ա-
նոր , որ Ապտ-Էլ-Մէճիտի պատկե-
րով զարդարուած էր : Յայտնի է
թէ Լուսանօֆ իշխանն Ապտ-Էլ-Մէ-
ճիտի գահակալութեան միջոցին ալ
Կ. Պոլսոյ դեսպան եղած էր :
Ռօտտօլօն մեղ գրուած նամակ
մը կը ծանուցանէ թէ սրիկայ Հայե-
րիտասարդ մը , ով պահած լինելով
քաղաքին Աւագ քահանայ Արթ. Տ.
Արիտտակէն Ֆէպլեանի դէմ , անցեալ
հինգշաբթի (մայիս 3) իրիկուն ժամը
12ին միջոցներն , երբ յիշեալ քահա-
նայն կառավարութեան դռնէն ետ
կը դառնար , ուր աղղային կարեւոր
գործով մը գնացած էր , ետեւէն վը-
րան կը յարձակի և մասններն անոր
աչուքները խօթելով կը ջանայ բը-
րել : Քահանայն յանկարծակիի դա-
լով կը կարծէ թէ ատրճանակի բը-
րան կը զետեղեն իւր աչաց մէջ , և
ահաբեկեալ կ'սկսի ամենայն զօրու-
թեամբ իրաց վանել կատաղի գա-
ղանին ձեռքերն , և նոյն միջոցին
կիցայ դետին : Խոխոյն շարադորձը
քահանային վրայ ինչպիսի գարձեալ
ճիգ կը թափէ անոր աչքը խլելու ,
բայց անդիէն Հայ երիտասարդ մը
վրայ հասնելով կազատէ քահանայն :
Իսկ շարադորձը կը փախչի : սակայն
ոստիկանութեան հազարապետն ու
մեն ջանք ի գործ գնելով մէկ ժամ
ետքը ձեռք կը ձգէ , և այժմ քրն-
նութեան կեղծարկուած է : Քահանայն

երեսներն ու աչաց բոլորովն արիւն-
լուայ տուն կը տարուի , ուր քանի
մ' օր դաւամանութիւն կը բժշկուի ,
առանց վնաս մը հասած լինելու իւր
աչաց :
Այստարօրինակ և անուր գաղա-
նական դէպքին չոր հետեանք մը
չունենալուն համար մեր ջերմ խնդա-
ցութիւնը կը յայտնեմք մեր վաղեմի
բարեկամ Արթ. Տը Արիտտակէն հօր ,
որ իւր ուսմանը աղղափրութեամբ
բն և անտղաւտ վարուք պատիւ
կը բերէ մեր եկեղեցական դասուն ,
և իրաւամբ արժանի է ամեն համակ-
րութեան և սրտուոյ :
Ինեայէն մայիս 10 թուով հե-
տեւայը կը գրեն մեզ .
« Ամայս էին քաղաքիս երեք աղ-
ղի հասարակութիւն ժողով ընելով
հետեւեալ հեռագիրը քաշեց Տրա-
պիզոնի վիշապէթին և Սամսունի միւ-
թէսարկիթութեան .
« Թրապիզոն վիշապէթ ճէլիէսինէ .
« Հիւրեւմէթ մէմուրէթի նիզա-
« մը տայիթէսինտէ միւրէյէֆօ օրուդ .
« լարը վէզայիֆի իրթիքեապարն .
« տան նալի իճրա իյլմէտիքէրն .
« տէն պէհէր կիճէ կուրալար միւռ .
« թէմա օլարագ նէֆիս դասապա-
« տա խանէ պարլիմա , տիւքեան
« սոյուլմա վէ սայիթ ֆէնայըզլար
« վուգուէ կէտիլի , վէ շու ճիճէթէ
« մալ , ճան վէ ըրդըմըզտան էմնիյէ-
« թիմիլ միւնտէլէպ վէ թէհլիքէյի
« հալան գալտըզըմըզտան , պէրայի
« թահլիգաթ պուրայէ պիլ մէմու-
« բուն իզամը միւսթէրհամ սըր .
« Ֆէրման » :
« Սոյն հեռագիրը ճշգրիտ պատ-
կեր մ'ըլլալով տեղւոյս կառավարու-
թեան ներկայ վիճակին և ընթաց-
քին , աւելորդ է մեզ երկարօրէն
նկարագրել . միայն սա ալ պէտք է
գիտնալ որ այսչափ դէպքութեանց ,
գործութեանց և համար և ոչ մէկ մը
բունուած , ընտուած , և պատ-
ժուած է :
« Կառավարութեան անդամաց մե-
ծադոյն մասին կաշառակերութեան ,
անհօգութեան և անկարողութեան
և պատճառաւ , ինչպէս կ'ըսէ հե-
ռագիրը , քաղաքն անապահովու-
թեան մէջ ըլլալով , շատեր տուներ-
նին թողած խանութիւն կը պառկին
պահպանութեան համար , տուներ-
նուն հսկողութիւնը դրացեաց վը-
տահելով : Ինեայ Տրապիզոնի վիշա-
պէթին մէջ Սամսունի և Գիրասունի
մէջ տեղ ծովեղերեայ դեղեցիկ քա-
ղաք մը և բանուկ նաւահանգիստ
մ'է : »
Վաղը թի մէջ հետեւեալ հետա-
քըրքալարժ լուրը կը կարդամք .
« Մալթիէի Հիւանդանոցին բը-
ժիլի Գաօլմարի պէյ գնդապետը
Գիրասունի 883 թուականին այսինքն
ասիէց 996 տարի առաջ Հայերէն
գրով գրուած Սաղմոս մը ձեռք ան-
ցուցեր է : Այս գիրքը ճշմարիտ հը-
նութիւն մ'է և գիրը շատ գեղեցիկ
է . մէջն ալ Գաւիթ մարգարէին պատ-
կերը կայ : Գրքէն կը հասկցուի թէ
գրողը կարնեցի մ'է եղեր : »
Գաղղիական լրագիր մը Ֆրանսա-
սոն երող դաղղիացի նախարարաց ,
ճերտկուտով անդամաց և երեսփոխա-
նաց ցուցակը կը հրատարակէ , որուն
նայելով դատական նախարար Պ. Լը
Ռօայէ , Հատարակաց կրթութեան նա-
խարար Պ. Ժիւլ Ֆերի և Առեւտրա-
կան նախարար Պ. Թիւրար , ինչպէս
նաեւ Պ. Պ. Կամպիլէթ , Ժիւլ Սիմօն ,
Ժիւլ Ֆալլէ , Բրէմիէ (հրեայ) , Վիլ-
թոր Հիւլի , Լուի Պլան , Լիթրէ և

Անուշահաստ օճառ, մերթը կը կտկու ըյնէ ու լեզու ջուրով ալ կը փրփրի, տեսակը խիստ ազնիւ ու գինը՝ չափաւ աման է. կը ծախուի Կ. Պոլիս Գալաթիոյ Միւստանէն եւ Ընկիւրաց Ամբիկա- յի Վաղապուռ: